

Տրովարտակ մը ձեռք բերել, որով Երուսաղեմի
 Ս. Աստուածածնի գերեզմանին վրայ Հայոց
 ունեցած հին իրաւունքը հաստատուեցաւ
 (Ա. Ա. Այոյաճեան, «Բիւզանդիոն», 1905,
 Թ. 2734): 1762ին ի Կ.Պոլիս գումարեալ
 ժողովը թէպէտ զինք Երուսաղեմի Թորոս
 Պատրիարքի յաջորդ ընտրեց, սակայն ինքն
 ամենայն հաստատութեամբ հրաժարեցաւ (անդ,
 էջ 87): 1763ին Գում գափու, Մայր Եկե-
 ղեցւոյ դէմը՝ Երուսաղեմատունը շինեց (էջ
 89), 1762 Մայիս 11ի հրդեհին Մայր Ե-
 կեղեցւոյ շուրջն այրած տներուն հողը գնե-
 լով: 1764ին Մայիս 13ին ի համագումար
 ժողովի Յակոբ Պատրիարք Նալեան հիւանդու-
 թեան պատճառաւ հրաժարելով՝ ամէնուն հաւ-
 անութեամբ վերջապէս զԳրիգոր Ծ. Վ. ըն-
 տրեցին Պատրիարք, որ ամենայն սաստկութեամբ
 ընդդիմանալէն ետեւ՝ ստիպուեցաւ հաւանիլ
 Պատրիարքին եւ ժողովրդեան թախանձանաց,
 Մայիս 15ին Բ. Գուռը գնաց, ու Պատրիարքա-
 կան Խնկա հագցուցին իրեն (էջ 232): Իր պա-
 րիարքութեան ժամանակ շատ նեղութիւններ
 եւ զրպարտութիւններ կրեց, զոր կը ստորագրէ
 «Յիշատակարանին» մէջ. յանդիմանուեցաւ
 հակառակորդներէն՝ թէ «դու ես որ զազգի
 բոլոր լատինացուցեր եւ հնազանդեցուցեր եկե-
 ղեցւոյն Հռոմայ եւ Հայրապետինորին», (էջ 153)
 թէ «զի իբր զՍարգիս (Սարգիս) եւ զՍա-
 մուէլ (Պրոսպեր) եպիսկոպոսունս ես իցեմ
 զնոսս առաքող յարեւմուտս՝ տալով նոցա եր-